



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
նչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅԻՆ ՀԱՊԺԱՊԿՈՄԸՏ

№ 71 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 71

ԻՆՉՊԵՍ ՎՈՉՆՉԱՑՆԵԼ
Մ Ր Ի Կ Ը

Կազմեց

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ՄԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1930

1.

2.
3.
4.

5.

6.

7.

8.
9.
10.
11.
12.

13.
14.
15.

ՀԱՅԿ ՀԱՊԺՈՂԿՈՄԸՏ

№ 71 ԳՅՈՒՂԱՑՈՒ ԳՐԱԴԱՐԱՆ № 71


632.451

ԻՆՉՊԵՍ ՎՈՋՆԶԱՑՆԵԼ
Մ Ր Ի Կ Ը

A $\frac{1}{4261}$

Կ ա զ մ ե ց

ԿՈՍՏԱՆԴԻՆ Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԹԱՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1930

Հրատ. № 1196.

Գրառ. № 3066(բ)

Պատ. № 230.

Տիրաժ 5000

Պետհրատի 2-րդ տպարան Յերևանում

ՄՐԻԿԸ ՀՈՂԱԳՈՐԾԻ ԹՇՆԱՄԻՆ Ե

I.

Ի՞նչ ԲԸՆ Ե ՄՐԻԿԸ ՅԵՎ Ի՞նչՊԵՍ Ե ՇՈՒՋԸՆՈՒՄ

Մեզ մոտ շատ հին ժամանակներից տա-
րածված և մրիկը (դանան), այն սև փոշին, վոր
հացահատիկների մեջ մտնելով, փչացնում և
նրանց, սևացնում թխած հացը և քչացնում բեր-
քի քանակը:

Մրիկի դեմն առնելու համար, քանի վոր
ֆորմալինի և պղնձարջասպի գործադրությունն
անծանոթ եր, բավականանում եյին հացահա-
տիկները ջրի մեջ լվանալով: Այժմ ել դեռ շատ
գյուղերում այդ պատական սովորությունը գո-
յություն ունի, վորին ամեն կերպ պետք և աշ-
խատել վերջ տալ:

Պետք և գիտենալ, վոր ջրի մեջ հացահա-
տիկները լվանալով բոլորովին չեն մաքրվում.
բավական և, վոր մրիկի փոշուց միջանի հա-
տիկներին կպած մնա, և այդ հատիկներն ար-
տում ցանվեն, ծիլ տալիս մրիկի սաղմը ևս ծը-
լում և և ցողունի միջոցով բարձրանում, մըտ-

նում ե հասկի հատիկների մեջ և լցվում այդ սև փոշիով. քամիներից փոշին տարածվում ե ամբողջ արտի մեջ, և հասկերն առանց առողջ հատիկների լեն մնում:

Մրիկն ավելի աչքի յե ընկնում կորեկի արտում. հիվանդացած փնջիկները հեռվից անգամ աչքի լեն ընկնում. հիվանդ փնջիկը մի խտացած գունդ ե ներկայացնում՝ տերևով ծածկված. այդ տերևը լերբ պատռվում՝ բացվում ե, նրա միջի սև փոշին քամիներից փռվում ե շրջակա արտերը:

Փոշետեսակ մրիկը լինում ե ցորենի, գարու, վարսակի և կորեկի վրա:

Բացի փոշետեսակ մրիկը կա և քաց ծղոսային մրիկ: Թաց մրիկը մնասում ե ցորենին ու աճարին: Թաց մրիկով վարակված հասկերն արտաքուստ թվում են բոլորովին առողջ, բայց հասունության ժամանակ առողջ հասկերը ծանրությունից կռանում են իսկ հիվանդները մնում են զցված: Հիվանդոտ հասկերն առողջներից քիչ փոքր են լինում և հատիկները ծածկող թեփը շատ ավելի գուլբա զցված, քան առողջ հասկերինը:

Հիվանդ հասկերի հատիկներն ավելի ուռած են և գուլնը քիչ մուգ. մատով սեղմելիս մրիկով լցված հատիկը տափակում ե և վատ հոտ

փշուձ: Դրա համար ել թաց մըիկն ասվում է
 նաև գաւրեանոս մըիկ:

Դարու վրա բացի փռշու մըիկը պատահում
 է և պինդ կամ փառային մըիկ: Քարային մըի-
 կով վարակված գարու հասկերն արտաքուստ նը-
 ման են առողջներին, միայն քիչ մուգ են.
 յեթե մասների արանքում հուպ են տալիս, նա
 շարդվում է, մանր պինդ կտորների բաժանվում,
 դրա համար ել այդպիսի մըիկը պինդ կամ փա-
 րային մըիկ անունն է ստացել:

II.

ԻՆՉՊԵՍ Ե ԱՌՁԱՆՈՐԺ ՄԵՐԻԿ ԵՆՎ ՎԱՐԱԿՈՐԺ ՀՆՅԱՐՈՐՅՍԵՐԸ

Այն սև փռշին, վոր հիվանդ հասկերի հա-
 տիկների մեջն է լցվում, մըիկի սաղմերն են, և
 այդ սաղմերի ոգնությամբ է նա բաղմանում:
 Այդ սաղմերին գիտնականները սպոր անունն են
 տալիս. սպորը սերմի պես ծլում, աճում է, բայց
 չի կարողանում իր զարգացման համար հողից
 կերակուր վերցնել. իր կյանքը պահպանելու հա-
 մար նա սնվում է հացաբույսի հյութով: Դրա
 համար մըիկի սպորը հենց վոր ծլում է, մըտ-
 նում է հացաբույսի ծղոտի մեջ, լերբ դեռ այդ
 ծղոտը նոր է հասիկից ձիւ սվել: Մըիկի սաղ-

մը հացաբուլսի ծղոտի մեջ ընկնելով՝ ձգվում է բարակ թելի ձևով և հացաբուլսի հետ միասին աճում։ Յերբ հացաբուլսը հասկ է բռնում կամ փնջիկ գցում, մրիկի բարակ թելիկը հասնում է ծղոտի միջով հասկերին, այն ժամանակ հիվանդ բուլսի մեջ հատիկի փոխարեն սև փոշի յե գուլանում, վորն, ինչպես ասացինք, քամիներից տարածվում է արտերում և վարակում թե հողը և թե առողջ հատիկները։

Ցորենի թաց մրիկով, իսկ կորեկի փոշու մրիկով վարակումը գլխավորապես առաջանում է կալսելու ժամանակ, յերբ մրիկոտ հասկերի սպորներն առողջ հատիկներին կպչելով, նրանց աղտոտում են։

Յեթե մրիկով աղտոտված հատիկները ցանենք, նրա հետ միասին հողի մեջ կմտցնենք և մրիկի սաղմերը և միաժամանակ հատիկների ծլելու հետ մրիկի սաղմերն ել հետը կծլեն և մատաղ հացաբուլսերը կվարակեն։

Հատիկների վրա մրիկի սաղմերը ցրտից չեն վախենում։ Եթե մի վարակված արտից հավաքած ցորենի հատիկները մի տարի, յերկու տարի և ավելի պահենք և ցանենք, այդ հատիկներին կպած սաղմերը դարձյալ չեն փչանում, պահում են իրենց ուժը և վարակում բերքը։

Մրիկի փոշին հիվանդ հատիկից հողի վրա

ընկնելով՝ կարող ե նրա մեջ միջանի տարի
մնալ և ցանված առողջ հատիկները վարակել:

Այս ձևով ե, վոր տարեցտարի շատանում
և տարածվում ե ցորենի և գարու մրիկային վո-
շին:

III.

ԻՆՉՊԵՍ ԸՁԵՏՎԵԼ ՄԵՐԻԿԻՑ

Մրիկը վարակիչ հիվանդություն ե. նրա
դեմ պետք ե կռիւլ: Յեթե սերմացուն վերցը-
նենք վարակված արտից, ամեն տարի գնալով
ափելի ու ափելի կուժեղանա, և վոչ միայն բեր-
քի քանակը կնվազի, այլև այդ մրիկոտ ապրան-
քի արժեքը շուկայում կընկնի, մինչև անգամ
գնողներ չեն լինի:

Յեւ այդ հասկանալի չե, քանի վոր այդպի-
սի հոցահատիկներն անպետք են սերմացվի հա-
մար և քիչ պիտանի ուտելու համար: Մրիկոտ
ալյուրը սե գույն ե ստանում, անդուրեկան հոտ
ունի, թխած հացն առողջության մնասում ե:
Մինչև անգամ շատ մրիկոտ ծղոտը կամ դար-
մանը տալարին մնաս ե տալիս:

Մրիկի առաջն առնելու համար առաջին
հերթին, իւրե կանոն, պետք ե բոլորովին ըն-
տիր և չվարակված տեղից հատիկներ վերցնել:

Սերմը ցանելուց առաջ սերմագտիչ մեքենայով պետք է խոշոր ու ծանր հատիկներն առանձնացնել, ջուկել: Ուրիշ շրջաններից բերած սերմացուներից պետք է պզուշանալ. նրանք հեշտ են նոր տեղում հիվանդության լենթարկվում:

Բացի այդ, մեծ նշանակություն ունի, իբրև նախազգուշացուցիչ միջոց, մրիկի դեմ հացաբույսերի սերմնափոխությունը: Միատեսակ հացահատիկի մրիկի սաղմերն ուրիշ տեսակը չեն վարակում:

Վարսակի մրիկի սաղմերը կարող են վարակել միայն վարսակը: Ցորենը, գարին, կորեկը կամ հաճարը լերբեք չեն վարակվում վարսակի մրիկի սաղմերով: Ցորենի թաց մրիկի սաղմերը կարող են միայն ցորենին վարակել. այսպես ամեն մի մրիկ ունի իր սիրած հացահատիկի տեսակը, վորին նա վարակում է, դրա համար ել մրիկը այն հացաբույսի անունով են կոչում, վորին նա վարակում է:

IV.

ՄՐԻԿԸ ՓԶՑՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մրիկը փչացնելու համար գլուղացիք այս միջոցներին են դիմում. մի տեղ հացահատիկները ջրի մեջ միջանի անդամ լվանում են, մի ու-

ըիշ տեղ ձյունի հետ խառնում, վոր մըիկից մաքրվի, յերբեմն ել կըաջրով կամ մոխրաջրով լվանում, սակայն ալդ միջոցները չեն ողնում, քանի վոր մըիկի սաղմերը—սպորներն այնպես մանր են, վոր միայն խոշորացուցով կարելի չե տեսնել:

Մըիկի դեմ կովելու ամենալավ միջոցը ճորմալինն է յեվ պղնձարջասպը: Յեթե մըիկով վարակված հատիկները թրջենք ֆորմալինի կամ պղնձարջասպի լուծվածքի մեջ, այն ժամանակ մըիկի բոլոր սաղմերը կվիչանան:

V.

ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Ե ՍԵՐՄԵՑՈՒՆ ՓՈՐՄԱԼԻՆՈՎ ԿԵՄ ՊՂՆՁԱՐՋԱՍՊՈՎ ՄԵՐԻԿԻՑ ՄԸՔՐԵԼ

Նախ պետք է գիտենալ, վոր ֆորմալինը մի պայծառ, շատ զորեղ, սուր հոտով հեղուկ է, վորի շոգին շնչելուց վնասվում է առողջությունը, դրա համար ել միշտ պինդ փակված ամանում պետք է պահել:

Դեղատներում վաճառքի հանած ֆորմալինը շատ թունդ է. գործադրելուց առաջ նրան ջուր են խառնում: Հացահատիկները լվանալու համար մի շիշ ֆորմալինին 15 վեդրո ջուր պիտի վերցնել: Մի վեդրո ջուրը քաշում է 30 ֆ. (12 կիլոգր.):

Սերմագտիչ մեքենայից անցրած խոշոր սերմացուն փռում են տախտակի հատակի կամ փալասի վրա, վոչ բարձր քան կես արշին, ցնցուղ անցրած վեդրուով մի հոգի Ֆորմալինի լուծվածքը սրսկում ե, մի ուրիշը թիակով խառնում: Ամեն մի փուլի հացահատիկին 3 շիշ լուծվածք ե գնում:

Յերբ կույտ դրած սերմացուն Ֆորմալինով հավասար չափով թրջվում ե, շորով կամ քսակներով ծածկում են և 2 ժամ թողնում: Յերկու ժամից ծածկույցը բացում են և սերմը բարակ շերտով, շվաֆ տեղում, վոչ արեվի տակ փռում, վոր չորանա:

Կա և մի ուրիշ ձև: Փոխանակ կույտ շինելու և սրսկելով թրջելու, մի կիսատակառի մեջ լցնում են Ֆորմալինի լուծվածքը, վորքան պետք ե, հետո սերմացուն դամբլուղներով կամ քսակներով կախում մեջը և յերկու կամ յերեք ըռպե պահելով հանում, թողնում, վոր ջուրը քամվի տակառի մեջ. թրջված ցորենը թափում են փալասի վրա, կույտ դնում, շորով ծածկում, 2 ժամ պահում:

Յերկու ժամից հետո բարակ շերտով շվաքում փռում են և չորացնում: Թնդուլթյունը նույնը պետք ե լինի, այն ե՝ մի շիշ Ֆորմալինին 15 վեդրո ջուր:

Այս ձևով գործը, ճիշտ է, դանդաղ է դը-
նում, և Ֆորմալինի լուծվածքը փոխանակ մի
փութ սերմին 3 շիշ գնալու՝ 5-6 շիշ պակաս
չի գնում, բայց այդ ձեն այն առավելութունն
ունի, Վոր սերմացվի ամեն մի հատիկը Ֆոր-
մալինի հեղուկի մեջ լավ և թրջվում:

VI.

ՊՂՆՁԱՐՋԱՏԱՊԸ ԻՆՁՊԵՍ ԵՆ ՄԻԻԿԸ ՎՈՉՆՁԱՆՈՒՄ

Պղնձարջատապը կամ կապուկա քարը վերցը-
նում են վեց վիդրո ջրին մի ճուղն:

Պղնձարջատապը շուտ լուծելու համար մի-
քիչ տաք ջուր են վերցնում, նրա մեջ շարդած
պղնձարջատապը լուծում և տակառի ջրին խառ-
նում: Մի վեդրո այդ լուծվածքով կարելի չէ 3
փութ սերմ մերկից ազատել: Հետևաբար 6 վեդ-
րո լուծվածքով, Վորի մեջ մտած է 1 ֆունտ
պղնձարջատապ, կարելի չէ 18 փութ սերմացու
մաքրել:

Լվանալն օլսալես են կատարում. սերմա-
ցուն ածում են զամբյուղի կամ մաղի մեջ, կո-
խում առկառը, ձեռքով խառնում և հինգ բոպե
պահելուց հետո հանում, քամում և փռում շվա-
քում, շորացնում:

Ձեռքով խառնելիս ջրի չեքեսն ընկած թե

հատիկները և թե ալ սերմերը հանում են հե-
ռացնում. դրանք անպետք են:

Գործը շուտ վերջացնելու համար լավ է
ձեռքի տակ լերկու կիսատակսու ունենալ, առա-
ջինի մեջ թրջելուց հետո յերկրորդի վրա կա-
խել կամ դնել, վոր քամվի. այդ ժամանակ լըց-
նում են սերմը նոր զամբյուղների մեջ և 5 բո-
պե դարձյալ պահում առաջին տակառում:

Հացահատիկների լվանալը ֆորմալինի և
պղնձարջասպի միջոցով, ինչպես տեսնում ենք,
վոչ մի դժվարութուն չունի, միայն պետք է
հետևել, այնպես տանել դործը, ինչպես վոր հիշ-
ված է այստեղ, այն է՝ մի շիւ Փոսալինին
վերցնել 300 շիւ կամ 15 վեդրո ջուր յեվ մի
Փունս պղնձարջասպին 6 վեդրո ջուր. այդ հա-
փից ավելի լեթե վերցնենք, սերմացվի ծելուն
կարող է վնաս տալ, հակառակ դեպքում, լեթե
քիչ վերցնենք, մրիկի սաղմերը չեն փչանա և
ցանելիս կվարակեն:

Սերմացուն պետք է դեղի մեջ թրջել ցա-
նելու ոըր կամ մի ոը առաջ. 2-3 ոըից ավել
չպետք է պահել:

Շարքացան մեքենայով ցանելիս պետք է
դործիքը ֆորմալինի կամ պղնձարջասպի ջրով
լվանալ, քանի վոր մրիկը կարող է կալած լինել
մեքենայի պատերին: Նույնպես անհրաժեշտ է

այդ լուծվածքով առաջուց լվանալ այն քսակները, վորոնցով սերմացուն տրտն են փոխադրում:

VII.

Ի՞նչ է ՊԵՏՃԸՌԻ, ՎՈՐ ՓՈՐՄԵԼԻՆԸ ՅԵՎ ՊՂՆՁԵՐՋԵՍՊԸ ԶԵՆ ՓՉԸՑՆՈՒՄ ՅՈՐԵՆԻ ՅԵՎ ԳԵՐՈՒ ՓՈՅՑԵՍԵԿ ՄՐԻԿԸ

Այս հարցի պատասխանը հետևյալն է. վարսակի և կորեկի փոշեառեալ մրիկի, ցորենի թաց մրիկի և դարու պինդ մրիկի սաղմերը գտնվում են այդ հացահատիկների զբախ կողմում: Յորմալինով կամ սղնձարջասպով լվանալիս նրանց թուր սաղմերը փչանում են:

Ցորենի և դարու փոշեառեալ մրիկի սաղմերն, ինչպես ասված է, ծիլ են դցում և հասիկի ներսում ամրանում. դրանից հատկանալի է, վոր լվանալը չի ոգնում: Մնում է դիմել հացահատիկները տաք ջրում պահելուն, վոր միակ ընդունված միջոցն է:

Դրա համար մրիկով վարակված հատիկները չորս ժամ թողնում են 25 աստիճան կամ վոչ ասիկի քան 30 աստ. Յելսիուսի շերմաչափով տաք ջրի մեջ: Զորս ժամից հետո հանում են հատիկները և կոխում 50-52 աստիճան տաքաց-


րած ջրի մեջ, 8 բոպեյից, ավելի ուշը 10 բոպեյից հատիկները հանում, ցուրտ ջրի մեջ իսկույն լվանում և շվաքում չորացնում:

Պետք է ջերմաչափն ուղիղ ցույց տա. յեթե ջուրը քիչ տաքացվի, հատիկները մեջ գլուխը վույ սաղմերը չեն փչանա և ընդհակառակը, յեթե անուշադիր լինենք, չափից մի քիչ բարձր լինի տաքության աստիճանը, սերմերը կարող են փչանալ:

Մրիկի դեմ կռվեն անհատ տնտեսության գործը չի: Յեթե հարևանիդ արտում կա, միևնույն ե՝ քոնն ել կվարակվի: Դրա համար ելսերմացվի ախտահանումը պիտի ամբողջ գլուխն անի, մտցնելով ապրոմինիմումի մեջ:

Ինչ խոսք, վոր կոլլեկտիվներն առաջին հերթին պիտի կատարեն ախտահանումը: Այդ նրանց ծրագրի առաջին կետն է:

Յեվ միայն կոլլեկտիվացման միջոցով մենք հնարավորություն կունենանք վերացնելու մեր գյուղատնտեսության բոլոր վնասատուներին ու հիվանդությունները, վորոնց թվում նաև մրիկը:





ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039156

(034)

A $\frac{I}{4261}$

ԳԻՆԸ 3 ԿՈՊ. Մ. ($1/2$ մանուկ)



Как уничтожить головню

Госиздат ССР Армении
Эривань — 1930